

ՄԱՍ 10. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ



Հայաստանի Հանրապետության
ազգային վիճակագրական ծառայություն

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ,
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ,
ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ**

Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները

*(ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի
47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական
հանձնաժողովի կողմից՝ 14.04.1994թ.)*

1. Պատշաճություն, անկողմնակալություն և տեղեկատվությունից օգտվելու հավասար մատչելիություն
2. Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
3. Հաշվետվություն և թափանցիկություն
4. Միայլ օգտագործման կանխում
5. Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
6. Գաղտնիություն
7. Օրենսդրություն
8. Ազգային մակարդակով համակարգում
9. Միջազգային ստանդարտների օգտագործում
10. Միջազգային համագործակցություն


**Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով
սահմանված սկզբունքները**

(ընդունված վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ)

1. Մասնագիտական անկախություն
2. Տվյալների հավաքագրման իրավասություն
3. Բավարար ռեսուրսներ
4. Որակի ապահովման պարտավորություն
5. Վիճակագրական գաղտնիություն
6. Անաչառություն և Օբյեկտիվություն
7. Մեթոդաբանության հիմնավորվածություն
8. Վիճակագրական գործընթացների հիմնավորվածություն
9. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն
10. Արդյունավետություն
11. Արդիականություն
12. Ծշգրտություն և Հուսալիություն
13. Յուրաժանանակություն և Ծշտապահություն
14. Փոխկապակցություն և Համադրելիություն
15. Մատչելիություն և Պարզություն

*«Եվրամիության և համագործակցության անդամ երկրների վիճակագրական մարմինների
անկախության, անբողջականության և հաշվետու լինելու մասին» հանձնաժողովի կոմունիկատը
Եվրամիության Պաշտոնական և Խորհրդին, Բրյուսել, 25.05.2005*

Պաշտոնական վիճակագրության դերը




Վիճակագրության արդիականության, որակի, ամբողջականության և օգտավետության փոխկախվածության բնութագիրը

Ժամանակ	Որակ	Ամբողջականություն	Օգտավետությունը ¹ (կիրառական նշանակությունը)
Արդիականություն			
<i>քիչ</i>	<i>ցածր</i>	<i>քերի</i>	<i>զուտ միտումների մասով օպերատիվ վճիռների համար</i>
<i>գերօպերատիվ</i>			
<i>միջին</i>	<i>միջին</i>	<i>միջին</i>	<i>որոշումների համար</i>
<i>միջին օպերատիվ</i>			
<i>երկար</i>	<i>բարձր</i>	<i>լիակատար</i>	<i>վերլուծությունների համար</i>
<i>պակաս արդիական</i>			

¹«Վիճակագրական տվյալները կարող են ունենալ փոխկապակցման ունակություն կամ կարող են փոխհամաձայնեցվել միմյանց հետ ոչ մեծ ժամանակային հատվածներում»-սկզբունք 14-րդ՝ Փոխկապակցվածություն և համադրելիություն, «Եվրոպական վիճակագրության վարչականոն» (ընդունված 24.02.2005թ. Վիճակագրական ծրագրային կոմիտեի նիստի ժամանակ և հաստատված Եվրոպական Համայնքների հանձնաժողովի կողմից (Էրյուսել, 25.05.2005թ. COM(2005) 217):

Ազդեցազման ցածր՝ միկրոատիճանի ծավալում տեղեկատվություն



Փնայակտելը. Պետական վիճակագրության և այն ապահովող սուբյեկտների փոխկախվածության հակադիր բնույթը:

→ .Պետական վիճակագրությանն առընչվող սուբյեկտների հակումները:
 ← .Այլ սուբյեկտների հետ երկկողմանի պարտադիր կապերը:

Վիճակագրական նպատակով տեղեկատվության հավաքագրման գործիքները

1. Համատարած հաշվառումների գործիք
 - I. Մարդահամարներ
 - II. Գյուղատնտեսության համատարած հաշվառումներ
 - III. Տնտեսական համատարած հաշվառումներ
2. Պարբերական հաշվառումների գործիք
 - I. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր
 - II. Պետական մարմիններ
 - III. Տեղական ինքնակառավարման մարմիններ
3. Ընտրանքային հաշվառումների գործիք
 - I. Ֆիզիկական անձինք (ներառյալ տնային տնտեսություններ)
 - II. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր
 - III. Պետական մարմիններ
 - IV. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Վիճակագրական ռեսպոնդենտները՝ սկզբնական տեղեկատվություն ներկայացնողները

- I. Ֆիզիկական անձինք (ներառյալ տնային տնտեսություններ)
- II. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր
- III. Պետական մարմիններ
- IV. Տեղական ինքնակառավարման մարմիններ

**Սկզբնական տեղեկատվություն ներկայացնողների՝
ռեսպոնդենտների, սկզբնական (ինքնուրույնաբար) հաշվառման
համակարգեր**

1. Ֆիզիկական անձինք
 - 1.1 քաղաքացիաիրավական հարաբերությունները բնութագրող պաշտոնական փաստաթղթեր
 - 1.2 կամավոր և հայեցողական կարծիքներ, բանավոր պատասխաններ
2. Կազմակերպություններ
 - 2.1 հաշվապահական հաշվառման փաստաթղթեր
 - 2.2 հարկային հաշվառման փաստաթղթեր
 - 2.3 մաքսային հաշվառման փաստաթղթեր
 - 2.4 քվազիֆիսկալ ոլորտի հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեգիստրներ
 - 2.5 գործառնական մոնիթորինգի, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր

**Սկզբնական տեղեկատվություն ներկայացնողների՝
ռեսպոնդենտների, սկզբնական (ինքնուրույնաբար) հաշվառման
համակարգեր**

3. Պետական մարմիններ
 - 3.1 պետական լիազորությունների շրջանակում ձևավորված վարչական ռեգիստրներ
 - 3.2 գործառնական մոնիթորինգի, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր
4. Տեղական ինքնակառավարման մարմիններ
 - 4.1 տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում ձևավորված վարչական ռեգիստրներ
 - 4.2 գործառնական մոնիթորինգի, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր

**Ի՞նչ է վարչական ռեգիստրը
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԳԼԽԱՎՈՐ
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Հասարակության ներքին և արտաքին անվտանգության ապահովում
- Հասարակության յուրաքանչյուր անդամի կայուն զարգացման համար նախադրյալների ձևավորում
- Հասարակության այն անդամների նվազագույն կարիքների ապահովում, որոնք դեռ և/կամ արդեն ի վիճակի չեն դրանք ինքնուրույնաբար հոգալու

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԻՐԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

- Վարչական լիազորությունների տիրապետող պետական մարմիններ (նախարարություններ, գերատեսչություններ և այլն)
- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Հանրային ծառայություններ մատուցող (ոչ վարչական բնույթի) պետական մարմիններ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ
(ՎԱՐՉԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՑՄԱՆ) ԳՈՐԾԻՔՆԵՐ**

- Իրավունքների և պարտավորությունների գրանցում ու հաշվառում,
- Գործունեության արտոնումներ, թույլատրություն, արգելում և կանխարգելում,
- Խրախուսում ու խաթարում,
- Կարգավորում,
- Վերահսկողություն,

**ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԻՔՆԵՐ (շարունակություն)**

- Ստուգում, ստուգաճշտում, տեսչական զննում և դիտազննում,
- Վեճերի քննարկում ու լուծում,
- Պատժի և սահմանափակումների կիրառում,
- Արտոնություններ, փոխհատուցումներ և անհատույց օժանդակության տրամադրում,
- Այլ գործիքներ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

- Հասկացությունների և չափորոշիչների սահմանում
- Դասակարգումներ (կարգավիճակների, գործունեության տեսակների, արտադրանքի, վարչատարծքային և այլ միավորների)
- Կողավորում (միասնական՝ նույնականացման հնարավորություններով)
- Անվանական հասցեական տեղեկատվություն (վարչական գործիքների կիրառման արդյունքում ձևավորված)

**ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄԸ**

Վարչական ռեգիստրները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող անվանական՝ հասցեական տվյալների բազաներ (շտեմարաններ) են, որոնք հիմք են և հետևանք վարչական ներգործությունների համար:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

- Վարչական ռեգիստրները ձևավորող մարմիններ (իրենց վերապահված անվանական` հասցեական վարչական ներգործության լիազորության իրացում)
- Այլ վարչական լիազորությունների տիրապետող մարմիններ (նույնականացնելով այլ վարչական ռեգիստրների անհատական տվյալների հետ)
- Վիճակագրական մարմիններ (վիճակագրական բնույթի հանրային ծառայություններ մատուցելու համար)
- Գիտակրթական հաստատություններ և անհատ հետազոտողներ (գիտահետազոտական և կրթական ծառայություններ մատուցելու համար)

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ**

- ▶ Պաշտոնական վիճակագրությունը, որպես վիճակագրական տեղեկատվություն մատակարարող, իրավասու է օգտագործել և ձևավոխել վարչական ռեգիստրներից ստացված տեղեկատվությունը` վիճակագրական սահմանումների և դասակարգիչներին դրանց համապատասխանությունն ու համադրելիությունը ապահովելու նպատակով:
- ▶ Այդ եղանակով ստացված տվյալները չեն փոխանցվում սկզբնական տեղեկատվությունը տնօրինողին (վարչական ռեգիստրին) կամ տրամադրվում երրորդ անձանց վարչական նպատակներով օգտագործելու համար:

Աղբյուրը` ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով,
Համաշխարհային բանկ, ECE-WORLDBANK/2003/W1/2, 11.08.2003

**Վարչական ռեգիստրների ձևավորման և օգտագործման
հետ կապված հիմնախնդիրներ**

- վիճակագրական և վարչական տեղեկատվության և դրանք կազմող սուբյեկտների հստակ օրենսդրական սահմանազատում,
- երկրում ամբողջական վարչական տեղեկատվական համակարգի ձևավորում,
- վիճակագրական նպատակներով վարչական տեղեկատվության անարգել օգտագործման ապահովում,
- արդի տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների հիման վրա վարչական տեղեկատվության ոլորտի ընդլայնման խթանում,
- վարչական տեղեկատվության որակի բարելավում և մեթոդաբանության զարգացում,
- վիճակագրական նպատակներով վարչական աղբյուրների օգտագործման վիճակագրական մեթոդաբանության զարգացում և կատարելագործում:

Աղբյուրը` ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների մեկնաբանությունը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՀԲ, 2003

**Վարչական ռեգիստրների ձևավորման և օգտագործման
հետ կապված հիմնախնդիրներ**

- Սպառողները պետք է ընկալեն վիճակագրական տեղեկատվություն մատուցողներին, մասնավորապես` ազգային վիճակագրական ծառայություններին, որպես որոշակի քաղաքականության կողմնորոշված պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող կազմակերպություններ,
- վարչական և վիճակագրական նպատակների և դրանց միջև կապերի բովանդակության հստակ սահմանում,
- վարչական և նմանօրինակ շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությանը չներքաշելու երաշխիքների ապահովում,


Աղբյուրը` ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների մեկնաբանությունը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՀԲ, 2003

Վերոնշյալ խնդիրների լուծմանը նպաստող գործոններ կարող են հանդիսանալ.

- երկրում ընդհանուր հաշվապահական և վիճակագրական մշակույթը,
- երկրի վճարահաշվարկային համակարգի ամբողջականությունը,
- երկրի կառավարման համակարգում վերափոխումների ավարտունությունը,
- երկրի վճարահաշվարկային համակարգում միջազգային ստանդարտների և դասակարգումների օգտագործման աստիճանն ու մասշտաբայնությունը,
- ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով կիրառվող մեթոդաբանության համապիտանիությունը, հասանելիությունը և համադրելիությունը,
- պետական գրանցման, լիցենզավորման, թույլտվության և այլ ընթացակարգերի բարդության (պարզության) աստիճանը և գործիքները,
- տեղական ինքնակառավարման ինքնակարգավորման աստիճանը:

Աղբյուրը՝ ՀԲ, Ֆրանսիայի վիճակագրական ծառայություն (INSEE), 2003

Կապը վարչական ռեզիստանսների հետ



63

Պաշտոնական վիճակագրության նկատմամբ վստահության պակասուրդի օբյեկտիվ պատճառներն են՝

1. Տարբերությունների տեսությունը,
2. Մպառողների տարաբնույթ շահերը,
3. Շրջակա միջավայրի մասնակիցների տարամետ հակումները,
4. Մեթոդաբանության բազմաշերտությունը,
5. Պետական ինստիտուտների նկատմամբ պատմականորեն ձևավորված վստահության պակասուրդը:

** Գազված է ըստ միջազգային գիտաժողովներում խնդրո առարկայի վերաբերյալ քննարկումների ակտիվումների:*

1. Տարբերությունների տեսությունը

Ցանկացած ամփոփ ցուցանիշ, իր բնույթով կարող է չհամընկնել առանձին ռեսպոնդենտի փորձառությանը, ավելին՝ դրսևորել նրա փորձառությանը հակադարձ ուղղություն: Միջինացված ցուցանիշներն ու անհատական ցուցանիշները կարող են էապես տարբերվել, ինչի հետևանքով անհատական փորձառության հեղինակը կարող է չհամաձայնել միջինացված փորձառության արդյունքներին (տարբերությունների տեսության սահմանում՝ **այնքանով, որքանով մեզանից յուրաքանչյուրը ֆիզիկապես նույնական չէ, այդքանով էլ գոյություն ունեն տարբերություններ:** Դրանք ոչ միայն սեռատարիքային են, ազգային, կրոնական, սովորությանային, հակումնային, այլև հաճելի – տհաճ, տանելի – անտանելի և այլն):

2. Սպառողների տարաբնույթ շահերը

Վիճակագրական տեղեկատվության սպառողները ոչ միայն հանրության տարաբնույթ հատվածների ներկայացուցիչներ են, այլև կոնկրետ անհատներ: Նրանք օբյեկտիվորեն կրում են քաղաքական, տնտեսական և այլ բնույթի տարաբնույթ շահեր, հետևաբար և վիճակագրական ցուցանիշների նկատմամբ տարաբնույթ սպասումներ: Այս իմաստով, ցանկացած ամփոփ ցուցանիշ նրանցից մեկի համար, ըստ իր սպասումների, լավ լուր է, մյուսի համար՝ վատ լուր, այլոց համար՝ որևէ արժեք չներկայացնող լուր:

3. Շրջակա միջավայրի մասնակիցների տարամետ հակումները **

Շրջակա միջավայրից պաշտոնական վիճակագրության մասնակիցները 3-ն են՝ ռեսպոնդենտներ, վիճակագրական տեղեկատվության սպառողներ և հարկատուներ: Նրանք ունեն տարաբնույթ հակվածություններ:

Ռեսպոնդենտը հակված է, որ տեղեկատվություն տրամադրելն ավելորդ հոգս (աշխատանք) է: **Վիճակագրական տեղեկատվության սպառողը** հակված է պահանջելու ազդեցական ցածր միկրոաստիճանի ծավալուն և յուրաժամանակ տեղեկատվություն: **Պետական քույզեն (հարկատուն)** ունի համոզմունք, որ այլ ծախսերն ավելի կարևոր և անհետաձգելի են, քան վիճակագրության համար ծախսերը: Պարադոքսն այն է, որ ցանկացած անձ միաժամանակ և՛ ռեսպոնդենտ է, և՛ վիճակագրական տեղեկատվության սպառող և՛ հարկատու: Հետևաբար նրա վերաբերմունքը վիճակագրությանը վերջինիս հետ շփվելու պահին (պարագայում) ուղղակիորեն կախված է այն հանգամանքից, թե նա այդ պահին որ կարգավիճակով է հանդես գալիս:

** Տե՛ս էջ 59, 2-րդ պատկեր:

4. Մեթոդաբանության բազմաշերտությունը

- Գոյություն ունեն վիճակագրության բազմաթիվ մեթոդաբանություններ, և դրանց բացարձակ մեծամասնությունը գիտականորեն հիմնավորված է, սակայն ոչ բոլորն են կիրառելի (կիրառական): Դրանց զգալի մասը քաղաքական, տնտեսական և այլ շահերին են հարմարեցված: Այդ իսկ պատճառով, վիճակագրության մեջ կիրառելի են **միայն** միջազգային մեթոդաբանությունները, և այդ խնդրի լուծումը սկսվել է 1947թ.-ից՝ ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի գործունեության սկզբից:
- Մեթոդաբանությունը բաղկացած է 4 տարրերից՝
 - Մահմանումներ,
 - Դասակարգումներ,
 - Տեղեկատվության աղբյուրներ,
 - Տեղեկատվության հավաքագրման, մշակման և տարածման գործիքակազմ:

Մեթոդաբանությունները փաստաթղթավորվում են և հրատարակվում:

4. Մեթոդաբանության բազմաշերտությունը (շարունակություն)

Վերոհիշյալ տարրերից յուրաքանչյուրն էլ պարունակում է գիտական արտահամար, ինչն էլ վստահության պակասորդի պատճառներից է հանդիսանում:

Դրանցից առավել ակնառուն վերագրվում է ընտրանքային գործիքներին, քանզի սպառողներն ավելի շատ վստահում են անհատական անվանական տվյալներին և չեն ընկալում **ընտրանքի թույլատրելի սխալ** հասկացությունը, ինչը համաշխարհային մակարդակով դասվում է կրթական հիմնախնդիրների շարքին:

Մյուս կարևոր պատճառը կապված է վիճակագրության արդիականության, որակի, ամբողջականության և օգտավետության փոխկախվածության մատրիցայի հետ (Տե՛ս «Պաշտոնական վիճակագրության առաքելությունը, կազմակերպման հիմնարար սկզբունքները, երկրում հաշվառման և տեղեկատվական համակարգերի առանձնահատկություններն ըստ վիճակագրական և վարչական նպատակների», 5-րդ պատկերը): Ցուցանիշների բարձր որակը և լիակատար ամբողջականությունը, ինչը ցուցանիշի օգտավետությունը բարձրացնում է վերլուծական մակարդակի, պահանջում է երկարաժամկետ աշխատանք, ինչն էլ այն դարձնում է պակաս արդիական, ի տարբերություն թերի ամբողջականությամբ գերյուրաժամանակ շտապ հավաքագրված տվյալներով ամփոփված ցուցանիշի:

4. Մեթոդաբանության բազմաշերտությունը (շարունակություն)

Այլ՝ ոչ պակաս, կարևորություն ունեցող պատճառներից են դասակարգումները (դասակարգիչները) և տեղեկատվության աղբյուրները:

Պասակարգիչներում տեսակավորումն իրագործվում է ըստ երևույթների գլխավոր հատկանիշների, ինչն ըստ ածանցյալ հատկանիշներով դասակարգմամբ հակադրումների հնարավորություն են ընձեռում:

Տեղեկատվության աղբյուրները հաճախ խնդրահարույց են կա՛մ դրանց բացակայության, կա՛մ էլ միջազգային վիճակագրական մեթոդաբանության պահանջներին չհամապատասխանության առումներով: Տեղեկատվության կարևորագույն աղբյուր հանդիսացող վարչական ռեգիստրները հաճախ ոչ միայն ամբողջական չեն, այլ նաև վիճակագրական նպատակներով ոչ կիրառելի, քանզի ձևավորվում են նեղ վարչական նպատակներով և այլն:

8

5. Պետական ինստիտուտների նկատմամբ պատմականորեն ձևավորված վստահության պակասուրդը

Քաղաքակրթության ողջ պատմությունը, ցավոք, կառուցված է պետական ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության ցածր չափաբաժնով: Այս իմաստով, որքանով էլ որ անցած դարի 90-ական թվականներից սկսած Եվրամիության և Տնտեսական զարգացման ու համագործակցության կազմակերպության անդամ երկրները սկսեցին վիճակագրական ծառայությունների առաքելությունները կառուցել հանրային շահ հետապնդող ինստիտուցիոնալ կառույցների սկզբունքի վրա, միևնույն է, այդ ծառայությունների պետական կարգավիճակը դեռևս այլընտրանք չունի, և որպես դրա հետևանք, պետական կառույցների նկատմամբ վստահության չափաբաժնի պակասուրդը տարածվում է նաև վերջիններիս վրա:

9